

**Ղատական Գործ N: ԼՂ/0144/01/10**

<b>Երբ է գործը ստացվել:</b>	27-05-2010
<b>Քրեական գործի համարը:</b>	ԼՂ/0144/01/10
<b>Ինչ կարգով է գործը ստացվել:</b>	Առաջին անգամ
<b>Գործը որտեղից է ստացվել:</b>	
<b>Ղատախազություն:</b>	<< Գլխավոր դատախազություն
<b>Նախաքննական գործի համարը:</b>	58201210
<b>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</b>	Ինտերնետային կայքերից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող թվով 10 պլաստիկ քարտերի տվյալներ,բացել է վիրտուալ հաշիվներ: Նշված գողացված քարտերի տվյալների օգտագործմամբ նրանցում առկա գումարները փոխանցել դրանց վրա: Նմանատիպ քարտեր է բացել <<ԱՌԿԱ>> համակարգի գործադրմամբ և ուղիներ է որոնել դրանց կանխիկացման համար:Այդ կարգով նա ստացել է մեծ գումարներ:
<b>Մեղադրյալ</b>	
<b>Անձ</b>	
Անուն	Լորիս
Ազգանուն	Ղազարյան
Հայրանուն	Մուկուչի
Հասցե	Վանաձոր Աղայան 83,բն,15
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	22-06-1980
<b>Հոդված_1</b>	
Հոդված	181 Մաս 2 Կետ 2
<b>Հոդված_1</b>	
Հոդված	190 Մաս 1
<b>Ղատվածություն:</b>	
<b>Պաշտպան</b>	
Անուն	Սեդա
Ազգանուն	Սաֆարյան
Հասցե	Երևան
Սեռ	Իգական
<b>Վիճակագրական տողի համարը:</b>	6,7
<b>Իրեղեն ապացույց</b>	
<b>Իրեղեն ապացույցի անվանումը:</b>	
<b>Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:</b>	
<b>Խախտման միջոց:</b>	Կալանավորում
<b>Չափաիաս:</b>	Այո
<b>Երբ:</b>	31-05-2010
<b>Նախագահող դատավոր</b>	

Դատարանի անվանում:	Լոռու մարզ
Դատավորի անուն:	Մուշեղ Պապիկի Հարությունյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Լոռու մարզ
Դատավորի անուն:	
<b>Երբ:</b>	31-05-2010
<b>Որոշումը ուղարկվել է կողմերին:</b>	01-06-2010
<b>Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:</b>	01-06-2010
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Երբ:</b>	18-06-2010
<b>Դատավարության կողմեր:</b>	Մեղադրյալ
<b>Դատավարության կողմեր:</b>	Տուժող
<b>Դատավարության կողմեր:</b>	Մեղադրող
<b>Դատավարության կողմեր</b>	
Անուն	Լորիս
Ազգանուն	Ղազարյան
Հայրանուն	Մուկուչի
Հասցե	<<Վանաձոր>>ՔԿՀ-ի կալանավոր
Սեռ	Արական
Ծննդյան ամսաթիվ	22-06-1980
<b>Դատավարության կողմեր</b>	
Անուն	Անդրանիկ
Ազգանուն	Շիրինյան
Հայրանուն	Արշակի
Հասցե	ք.Երևան
Սեռ	Արական
<b>Դատավարության կողմեր</b>	
Անուն	Ա.
Ազգանուն	Ամիրզադյան
Հասցե	<< Գլխավոր դատախազություն
Սեռ	Արական
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	14:00
<b>Դատավարության կողմեր</b>	
Անուն:	
Հասցե:	
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	3
<b>Երբ:</b>	07-07-2010
<b>Ժամ:</b>	14:00
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	3

<b>Այլ նշումներ:</b>			
<b>Ամսաթիվ:</b>	07-07-2010		
<b>Այլ նշումներ:</b>			
<b>Մեղադրյալ</b>			
Անուն	Լորիս		
Ազգանուն	Ղազարյան		
Հայրանուն	Մուկուչի		
Հասցե	<<Վանաձոր>>ՔԿՀ-ի կալանավոր		
Սեռ	Արական		
<b>Ամսաթիվ:</b>	07-07-2010		
<b>Առավել ծանր հանցագործության հոդված</b>			
Հոդված	<< քր.օր-ի181	Մաս 2-րդ	Կետ 2-րդ
<b>Առավել ծանր հանցագործության հոդվածով:</b>			
<b>Այլ հանցագործության հոդվածներ</b>			
Հոդված	<< քր. օր-ի190	Մաս 1-ին	
<b>Այլ հանցագործության հոդվածներով:</b>			
Հիմնական պատիժ:	Որոշակի ժամկետով ազատազրկում		
Լրացուցիչ պատիժ:			
Այլ պատժաչափեր:			
<b>Ազատվել է պատժի կիրառումից (Հիմքը):</b>			
<b>Բռնագանձված գույքի չափը:</b>			
<b>Ղատական ակտի բովանդակությունը:</b>	<p>Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ ԼԴ/0144/01/10</p> <p>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով՝ Նախագահող-ղատավոր Մ.Հարությունյան Քարտուղար Ռ.Թամարյան Մեղադրող-ղատախազ Ա.Ամիրզադյան Տուժողի ներկայացուցիչ Ա.Շիրինյան</p> <p>2010թ. հուլիսի 7-ին Վանաձորում, դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ մեղադրանքի Լորիս Մուկուչի Ղազարյանի՝ ծնված 1980թ. հունիսի 22-ին Նոյեմբերյան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, չամուսնացած, չղատված, չի աշխատում, ֆիզիկապես վատառողջ՝ տառապում է «Ստամոքսի խոց» և «Լոզոնկրոզ» հիվանդություններով, հաշվառված է ք.Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4, 57/11 հասցեում, բնակվում է ք.Վանաձոր, Աղայան 83/15 հասցեում: Փաստացի արգելանքի տակ է 2010թ. փետրվարի 16-ից: Մեղադրվում է ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով:</p> <p>Գործի դատավարական նախապատմությունը. Նախաքննական մարմնի կողմից Լորիս Ղազարյանին մեղադրանք է</p>		

առաջադրվել ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Լորիս Ղազարյանը ինտերնետային [www.cvv.me](http://www.cvv.me) և [www.visaveryfai.ru](http://www.visaveryfai.ru) կայքերից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիների պատկանող և ԱՄՆ բանկերում սպասարկվող բանկային գողացված թվով 10 «Master card» համակարգով սպասարկվող պլաստիկ քարտերի տվյալներ /քարտապանի անուն, ազգանուն, 16 նիշանոց համարը, քարտի թողարկման և գործունեության ժամկետը, քարտի CVV եռանիշ կոդը/: Այնուհետև [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքում այլ անձանց տվյալներով Լորիս Ղազարյանը բացել է վիրտուալ դրամապանակներ՝ նախապես մտադրություն ունենալով գնված գողացված քարտերից գումարներ փոխանցել դրանց վրա: Նշված գողացված քարտերի տվյալների օգտագործմամբ Լորիս Ղազարյանը նրանցում առկա գումարները փոխանցել է [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքում արդեն գործող իր վիրտուալ դրամապանակների վրա: Դրանից հետո Լորիս Ղազարյանը նույնպես այլ անձանց տվյալներով էլեկտրոնային վիրտուալ դրամապանակներ է բացել տարբեր տեսակի վարձավճարների ընդունումով զբաղվող «ԻՂՐԱՄ» ինտերնետային համակարգում: [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքի իրեն պատկանող վիրտուալ հաշիվներից Լորիս Ղազարյանը գումարները «ԱՌԿԱ» համակարգի գործածմամբ, գաղտնի հափշտակելով, փոխանցել է «ԻՂՐԱՄ» համակարգում գործող իր էլեկտրոնային քարտի վրա և սկսել է ուղիներ որոնել դրանց կանխիկացման համար: Նպատակ ունենալով թաքցնել այդ գումարների հանցավոր ծագումը, ինտերնետային [www.yandex.ru](http://www.yandex.ru) կայքի փնտրողական ծառայության միջոցով, հանցավոր ծագում ունեցող գումարների կանխիկացման առաջարկներով հանդես եկող իրավաբանական և ֆիզիկական անձանց ցանկից Լորիս Ղազարյանը ծանոթացել է ազգությամբ հայ, մոսկվայաբնակ Արմեն անունով անձնավորության հետ, որի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել այն մասին, որ գումարը ինքը «web money» համակարգի միջոցով կփոխանցի Մոսկվա, որտեղ վերը նշված Արմենը շրջանառվող գումարի երեք տոկոսի դիմաց կկանխիկացնի դրանք և բանկային փոխանցումով կուղարկի Վանաձոր: Առաջին գործարքը կազմել է 400 ԱՄՆ դոլարին համարժեք 158.000 դրամ, գումարը Մոսկվայում կանխիկացվել և Լորիս Ղազարյանի քրոջ՝ Լիլիթ Ղազարյանի անվամբ Վանաձոր է ուղարկվել Յունիբանկի միջոցով: Վանաձորում գումարը ստացել և եղբորն է փոխանցել Լիլիթ Ղազարյանը: Այնուհետև, նույն սխեմայով, ևս մեկ գործարք է կատարվել, սակայն այս անգամ գումարը կազմել է 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք 395.000 դրամ: 2010թ. հունվար ամսին ֆինանսական որոշ հրատապ խնդիրներով պայմանավորված Լորիս Ղազարյանը որոշել է գումար կանխիկացնել Վանաձորում: Այդ նպատակով նա «ԻՂՐԱՄ» համակարգում առկա իր վիրտուալ բանկային քարտից 138.000 դրամ է փոխանցել «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում գործող, իր հորեղբորդուն՝ Ղազարոս Ղազարյանին պատկանող հաշվեհամարի վրա, որից 80.000 դրամը կանխիկացրել է անձամբ: Այնուհետև ևս 103.000 դրամ Լորիս Ղազարյանը փոխանցել է հոր՝ Մուկուչ Ղազարյանի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում գործող հաշվին և խնդրել հորը՝ գնալ, ստանալ այդ գումարը և փոխանցել իրեն, որն էլ հայրը կատարել է: Այսպիսով, Լ.Ղազարյանը ընդհանուր առմամբ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակել է խոշոր չափի համարվող 794.000 դրամ, այնուհետև օրինականացրել հանցավոր ձանապարհով ստացված գումարից 736.000 դրամը:

Ապացույցների հետազոտում և գնահատում.

Առաջադրված մեղադրանքում Լորիս Ղազարյանն իրեն մեղավոր ճանաչեց և խոստովանական ցուցմունք տվեց այն մասին, որ ինտերնետային կայքերից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող և ԱՄՆ բանկերում սպասարկվող բանկային գողացված թվով 10 «Master card» համակարգով

սպասարկվող պլաստիկ քարտերի տվյալներ: Այնուհետև ինտերնետային կայքում այլ անձանց տվյալներով բացել է վիրտուալ դրամապանակներ՝ նախապես մտադրություն ունենալով գնված գողացված քարտերից գումարներ փոխանցել դրանց վրա: Նշված գողացված քարտերի տվյալների օգտագործմամբ նրանցում առկա գումարները փոխանցել է ինտերնետային կայքում արդեն գործող իր վիրտուալ դրամապանակների վրա: Դրանից հետո նույնպես այլ անձանց տվյալներով էլեկտրոնային վիրտուալ դրամապանակներ է բացել տարբեր տեսակի վարձավճարների ընդունումով զբաղվող «ԻՂՐԱՍ» ինտերնետային համակարգում: Ինտերնետային կայքի իրեն պատկանող վիրտուալ հաշիվներից գումարները «ԱՌԿԱ» համակարգի գործածմամբ փոխանցել է «ԻՂՐԱՍ» համակարգում գործող իր էլեկտրոնային քարտի վրա և սկսել է ուղիներ որոնել դրանց կանխիկացման համար: Ինտերնետային [www.yandex.ru](http://www.yandex.ru) կայքի փնտրողական ծառայության միջոցով ծանոթացել է ազգությամբ հայ, մոսկվայաբնակ Արմեն անունով անձնավորության հետ, որի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել այն մասին, որ գումարը ինքը «web money» համակարգի միջոցով կփոխանցի Մոսկվա, որտեղ նա շրջանառվող գումարի երեք տոկոսի դիմաց կկանխիկացնի դրանք և բանկային փոխանցումով կուղարկի Վանաձոր: Առաջին գործարքը կազմել է 400 ԱՄՆ դոլարին համարժեք 158.000 դրամ, գումարը Մոսկվայում կանխիկացվել և իր քրոջ՝ Լիլիթ Ղազարյանի անվամբ Վանաձոր է ուղարկվել 3ունիբանկի միջոցով: Վանաձորում քույրը գումարը ստացել և փոխանցել է իրեն: Այնուհետև, նույն սխեմայով, ևս մեկ գործարք է կատարվել, սակայն այս անգամ գումարը կազմել է 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք 395.000 դրամ: 2010թ. հունվար ամսին «ԻՂՐԱՍ» համակարգում առկա իր վիրտուալ բանկային քարտից 138.000 դրամ է փոխանցել «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում գործող, իր հորեղբորդուն՝ Ղազարոս Ղազարյանին պատկանող հաշվեհամարի վրա, որից 80.000 դրամը կանխիկացրել է անձամբ: Այնուհետև ևս 103.000 դրամ փոխանցել է հոր՝ Մուկուչ Ղազարյանի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում գործող հաշվին և խնդրել հորը՝ գնալ, ստանալ այդ գումարը և փոխանցել իրեն, որն էլ հայրը կատարել է: Ձեռքաց կատարածի համար:

Գ. Թ. 120, 33-34, 48, 90

Լորիս Ղազարյանի կատարած հանցագործությունը, բացի իր խոստովանական ցուցմունքից, ապացուցված է նաև գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

Տուժողի ներկայացուցիչ Անդրանիկ Շիրինյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ իրավաբանական վարչության առաջատար մասնագետ: ԱՄՆ բանկերի կողմից պահանջներ են ուղարկվել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ հափշտակված գումարների ետգանձումների վերաբերյալ, ինչի արդյունքում վերադարձվել է հանցագործների կողմից հափշտակված գումարը՝ 10.451.349 դրամ 77 լումայի չափով: Լորիս Ղազարյանի գործողությունների հետևանքով բանկին պատճառված նյութական վնասը կազմել է 794.000 դրամ, որից 450.000 դրամը ամբաստանյալի հայրը սույն գործի դատաքննության ընթացքում մուծել է և պարտավորվել է մուծել նաև գումարի մնացած մասը: Քաղաքացիական հայց ներկայացրեց 344.000 դրամի չափով:

Գ.Թ. 199-200

Գործով վկա Գառնիկ Տիտանյանի ցուցմունքով այն մասին, որ 2009թ. հոկտեմբերի 1-ից աշխատում է «Տանդեն փեյմնթս» ՍՊԸ-ում, որպես գործադիր տնօրեն: Ընկերությունը զբաղվում է բոլոր տեսակի վարձավճարների էլեկտրոնային հավաքագրմամբ, որն իրականացվում է մայրաքաղաքում և ՀՀ մարզերում տեղակայված տերմինալների և [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքի միջոցով: Կայքում կատարվող վճարումները կարելի է իրականացնել միայն համակարգում գրանցվելուց հետո: Գրանցվելու համար պահանջվող տեղեկատվությունը որևէ կերպ չի ինդենտիֆիկացվում, քանի որ համակարգը չունի այդ հնարավորությունը, ուստի հաճախորդների

կողմից հնարավոր է սխալ տվյալների մուտքագրում: 2009թ. նոյեմբերի 27-ից [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքով՝ միջազգային «Մաստեր քարտ» համակարգի գործածմամբ կատարվել են կեղծ գործարքներ: Այդ մասին ընկերությունը տեղեկացել է սպասարկվող բանկի՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից: Գ.Թ. 75-76

Գործով վկա Կարեն Խաչատրյանի ցուցմունքով այն մասին, որ 2006թ. հուլիսից աշխատում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում, 2008թ. հուլիսից հանդիսանում է պլաստիկ քարտերի սպասարկման վարչության պետը: 2009թ. նոյեմբերի 30-ից սկսած մինչև 2010թ. փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում միջազգային «Մաստեր քարտ» համակարգի պլաստիկ քարտերով կատարված կեղծ գործարքների մասով բանկը նշված քարտերը տրամադրած օտարերկրյա բանկերից ստացել է ետգանձումային բողոքարկումներ՝ 9.577.000 դրամի չափով: Նշված գումարի մի մասը՝ 3.253.525 դրամը, բանկը գանձել է «Տանդեմ փեյմենթ» ՍՊԸ թղթակցային հաշվից:

Գ.Թ. 77-78

Գործով վկա Ղազարոս Ղազարյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է Լորիս Ղազարյանի հորեղբորդին: Լորիսը զբաղվել է բջջային հեռախոսների վաճառքով և վերանորոգմամբ: 2009թ. ապրիլ ամսվա սկզբներին Լորիսը խնդրել է, որպեսզի իր անվամբ «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում բացեն հաշվեհամար և վերցնեն վարկ՝ անձնական կարիքները հոգալու համար: Այդ ժամանակ Լորիսը բնակվելիս է եղել Նոյեմբերյան քաղաքում և քանի որ ինքը չի հանդիսացել Նոյեմբերյան քաղաքի բնակիչ, այդ պատճառով էլ խնդրել է վարկը ձևակերպել իր անունով: Ինքը համաձայնվել է և երկուսով գնացել են «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ Նոյեմբերյանի մասնաճյուղ, որտեղ հանձնել են իր փաստաթղթերը՝ վարկ ստանալու համար: 2009թ. ապրիլի 17-ին բանկից գանգահարել են իրեն և հայտնել, որ վարկը պատրաստ է, կարող է ներկայանալ և ստանալ այն, որն էլ իրենք արել են: Վարկի գումարը կազմել է 1.000 ԱՄՆ դոլար և այն տրվել է բանկի պլաստիկ քարտով: Բանկից դուրս գալուց հետո նշված քարտը փոխանցել է Լորիսին և հետագայում նրան չի տեսել: 2009թ. դեկտեմբերի 7-ին իր անվամբ բացված հաշվեհամարին կատարված փոխանցման մասին իրեն ոչինչ հայտնի չէ:

Գ.Թ. 120-121

Գործով վկա Արմեն Մկրտչյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է «Մայլան» ՍՊԸ տնօրենը, որը զբաղվում է Վանաձոր քաղաքում ինտերնետ կապի ապահովմամբ: 2009թ. ընթացքում ընկերությունն ունեցել է 150-300 հաճախորդ, որոնց թվում է եղել նաև Լորիս Ղազարյանը: Ընկերությանը դիմած քաղաքացուն տրվում է 6 ամիս փորձաշրջան, այնուհետև կնքվում պայմանագիր, Լորիսի հետ իրենք պայմանագիր չեն կնքել: Իրենց կողմից նախաքննությանը ներկայացրած սկավառակը պարունակում է բոլոր այն կայքերը, որոնցից օգտվել է հաճախորդը: Աղյուսակի առաջին հատվածում նշված է կայքի անվանումը, երկրորդում՝ կայք մուտք գործելու ամսաթիվը, երրորդում՝ կայք մուտք գործելու ճշգրիտ ժամկետը: Հաճախորդ դառնալիս քաղաքացուն տրվում է անձնական նույնականացման համար, որը Լորիսի մոտ եղել է «10.9.0.39»:

Գ.Թ. 170-171

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի թիվ 151-02 առ 22.01.2010թ. ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրված գրությամբ, որում շարադրված են բանկ ուղարկված ետգանձումային պահանջները և բանկի կողմից վերականգնված գումարը:

Գ.Թ. 7-10

ՀՀ Կենտրոնական բանկից 10.02.2010թ. ստացված գրությամբ, որում շարադրված են գեղծարար գործարքների ամսաթվերը և հափշտակված գումարների չափը:

Գ.Թ. 11-13

«Տանդեն փեյմնթս» ՍՊԸ 20.01.2010թ. ՀՀ ԱԱԾ տնօրենին գրությամբ, որում շարադրված են ընկերության կրած վնասների բնույթը, կատարման եղանակը և չափը:

Գ.Թ. 14-16

«Տանդեն փեյմնթս» ՍՊԸ 01.02.2010թ. ՀՀ ԱԱԾ տնօրենին գրությամբ, որում շարադրված են կասկածելի գործարքների կատարման ամսաթիվը, ժամը, օպերատորի և բաժանորդի տվյալները, ինտերնետային կայքերի հասցեները, որոնցից ստացվել են հարցումները:

Գ.Թ. 37-50

«Մայլան» ՍՊԸ կողմից տրամադրված լազերային սկավառակով և դրա գննության արձանագրությամբ:

Գ.Թ. 172-174

ՀՀ Կենտրոնական բանկից 09.04.2010թ. ստացված գրությամբ, որում շարադրված են քննությանը հետաքրքրող անձանց կողմից 2009թ. ընթացքում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերում կատարված գործարքների վերլուծությունը:

Գ.Թ. 182-184

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի թիվ 1560-02 առ 16.04.2010թ. ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետին հասցեագրված գրությամբ, որում շարադրված են բանկի կրած վնասի չափը և քրեական գործով որպես տուժող կողմ հանդես գալու հանգամանքը:

Գ.Թ. 207-207

Ղատարանի իրավական վերլուծությունները.

Ղատարանը գտավ, որ նախաքննական մարմնի կողմից Լորիս Մուկուչի Ղազարյանին ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը որակված է ճիշտ, որն ապացուցված է գործով ձեռք բերված մի շարք ապացույցներով:

Մասնավորապես՝ Լորիս Ղազարյանի խոստովանական ցուցմունքով այն մասին, որ ինտերնետային կայքերից 2-10 ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ քաղաքացիներին պատկանող և ԱՄՆ բանկերում սպասարկվող բանկային գողացված թվով 10 «Master card»

համակարգով սպասարկվող պլաստիկ քարտերի տվյալներ:

Այնուհետև ինտերնետային կայքում այլ անձանց տվյալներով բացել է վիրտուալ դրամապանակներ՝ նախապես մտադրություն ունենալով գնված գողացված քարտերից գումարներ փոխանցել դրանց վրա: Նշված գողացված քարտերի տվյալների օգտագործմամբ նրանցում առկա գումարները փոխանցել է ինտերնետային կայքում արդեն գործող իր վիրտուալ

դրամապանակների վրա: Դրանից հետո նույնպես այլ անձանց տվյալներով էլեկտրոնային վիրտուալ դրամապանակներ է բացել տարբեր տեսակի վարձավճարների ընդունումով զբաղվող

«ԻՂՐԱՄ» ինտերնետային համակարգում: Ինտերնետային կայքի իրեն պատկանող վիրտուալ հաշիվներից գումարները «ԱՌԿԱ» համակարգի գործածմամբ փոխանցել է «ԻՂՐԱՄ» համակարգում

գործող իր էլեկտրոնային քարտի վրա և սկսել է ուղիներ որոնել դրանց կանխիկացման համար: Ինտերնետային [www.yandex.ru](http://www.yandex.ru)

կայքի փնտրողական ծառայության միջոցով ծանոթացել է ազգությամբ հայ, մոսկվայաբնակ Արմեն անունով անձնավորության

հետ, որի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել այն մասին, որ գումարը ինքը «web money» համակարգի միջոցով կփոխանցի Մոսկվա, որտեղ նա շրջանառվող գումարի երեք տոկոսի դիմաց կկանխիկացնի դրանք և բանկային փոխանցումով կուղարկի

Վանաձոր: Առաջին գործարքը կազմել է 400 ԱՄՆ դոլարին համարժեք 158.000 դրամ, գումարը Մոսկվայում կանխիկացվել և իր

քրոջ՝ Լիլիթ Ղազարյանի անվամբ Վանաձոր է ուղարկվել

Յունիբանկի միջոցով: Վանաձորում քույրը գումարը ստացել և փոխանցել է իրեն: Այնուհետև, նույն սխեմայով, ևս մեկ գործարք է կատարվել, սակայն այս անգամ գումարը կազմել է 1.000 ԱՄՆ

դոլարին համարժեք 395.000 դրամ: 2010թ. հունվար ամսին

«ԻՂՐԱՍ» համակարգում առկա իր վիրտուալ բանկային քարտից 138.000 դրամ է փոխանցել «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում գործող, իր հորեղբորդուն՝ Ղազարոս Ղազարյանին պատկանող հաշվեհամարի վրա, որից 80.000 դրամը կանխիկացրել է անձամբ: Այնուհետև ևս 103.000 դրամ փոխանցել է հոր՝ Մուկուչ Ղազարյանի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում գործող հաշվին և խնդրել հորը՝ գնալ, ստանալ այդ գումարը և փոխանցել իրեն, որն էլ հայրը կատարել է: Տուժողի ներկայացուցիչ Անդրանիկ Շիրինյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

իրավաբանական վարչության առաջատար մասնագետ: ԱՄՆ բանկերի կողմից պահանջներ են ուղարկվել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ հափշտակված գումարների ետգանձումների վերաբերյալ, ինչի արդյունքում վերադարձվել է հանցագործների կողմից

հափշտակված գումարը՝ 10.451.349 դրամ 77 լումայի չափով: Լորիս Ղազարյանի գործողությունների հետևանքով բանկին պատճառված նյութական վնասը կազմել է 794.000 դրամ, որից 450.000 դրամը ամբաստանյալի հայրը սույն գործի դատաքննության ընթացքում մուծել է և պարտավորվել է մուծել նաև գումարի մնացած մասը: Քաղաքացիական հայց ներկայացրեց 344.000 դրամի չափով:

Գործով վկա Գառնիկ Տիտանյանի ցուցմունքով այն մասին, որ 2009թ. հոկտեմբերի 1-ից աշխատում է «Տանդեմ փեյմնթս» ՍՊԸ-ում, որպես գործադիր տնօրեն: Ընկերությունը զբաղվում է բոլոր տեսակի վարձավճարների էլեկտրոնային հավաքագրմամբ, որն իրականացվում է մայրաքաղաքում և ՀՀ մարզերում տեղակայված տերմինալների և [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքի միջոցով: Կայքում կատարվող վճարումները կարելի է իրականացնել միայն համակարգում գրանցվելուց հետո: Գրանցվելու համար պահանջվող տեղեկատվությունը որևէ կերպ չի ինդենտիֆիկացվում, քանի որ համակարգը չունի այդ հնարավորությունը, ուստի հաճախորդների կողմից հնարավոր է սխալ տվյալների մուտքագրում: 2009թ.

նոյեմբերի 27-ից [www.tandem.am](http://www.tandem.am) ինտերնետային կայքով՝ միջազգային «Մաստեր քարտ» համակարգի գործածմամբ կատարվել են կեղծ գործարքներ: Այդ մասին ընկերությունը տեղեկացել է սպասարկվող բանկի՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից: Գործով վկա Կարեն Խաչատրյանի ցուցմունքով այն մասին, որ 2006թ. հուլիսից աշխատում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում, 2008թ. հուլիսից հանդիսանում է պլաստիկ քարտերի սպասարկման վարչության պետը: 2009թ. նոյեմբերի 30-ից սկսած մինչև 2010թ. փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածում միջազգային «Մաստեր քարտ» համակարգի պլաստիկ քարտերով կատարված կեղծ գործարքների մասով բանկը նշված քարտերը տրամադրած օտարերկրյա բանկերից ստացել է ետգանձումային

բողոքարկումներ՝ 9.577.000 դրամի չափով: Նշված գումարի մի մասը՝ 3.253.525 դրամը, բանկը գանձել է «Տանդեմ փեյմնթս» ՍՊԸ թղթակցային հաշվից:

Գործով վկա Ղազարոս Ղազարյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է Լորիս Ղազարյանի հորեղբորդին: Լորիսը զբաղվել է բջջային հեռախոսների վաճառքով և վերանորոգմամբ: 2009թ.

ապրիլ ամսվա սկզբներին Լորիսը խնդրել է, որպեսզի իր անվամբ «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում բացեն հաշվեհամար և վերցնեն վարկ՝ անձնական կարիքները հոգալու համար: Այդ ժամանակ Լորիսը բնակվելիս է եղել Նոյեմբերյան քաղաքում և քանի որ ինքը չի հանդիսացել Նոյեմբերյան քաղաքի բնակիչ, այդ պատճառով էլ խնդրել է վարկը ձևակերպել իր անունով: Ինքը համաձայնվել է և երկուսով գնացել են «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ Նոյեմբերյանի մասնաճյուղ, որտեղ հանձնել են իր փաստաթղթերը՝ վարկ ստանալու համար: 2009թ. ապրիլի 17-ին բանկից զանգահարել են իրեն և հայտնել, որ վարկը պատրաստ է, կարող է ներկայանալ և ստանալ այն, որն էլ իրենք արել են: Վարկի գումարը կազմել է 1.000 ԱՄՆ դոլար և այն տրվել է բանկի պլաստիկ քարտով: Բանկից դուրս գալուց հետո նշված քարտը փոխանցել է Լորիսին և հետագայում նրան չի տեսել: 2009թ. դեկտեմբերի 7-ին իր

անվամբ բացված հաշվեհամարին կատարված փոխանցման մասին իրեն ոչինչ հայտնի չէ:

Գործով վկա Արմեն Մկրտչյանի ցուցմունքով այն մասին, որ հանդիսանում է «Մայլան» ՍՊԸ տնօրենը, որը զբաղվում է Վանաձոր քաղաքում ինտերնետ կապի ապահովմամբ: 2009թ. ընթացքում ընկերությունն ունեցել է 150-300 հաճախորդ, որոնց թվում է եղել նաև Լորիս Ղազարյանը: Ընկերությանը դիմած քաղաքացուն տրվում է 6 ամիս փորձաշրջան, այնուհետև կնքվում պայմանագիր, Լորիսի հետ իրենք պայմանագիր չեն կնքել: Իրենց կողմից նախաքննությանը ներկայացրած սկավառակը պարունակում է բոլոր այն կայքերը, որոնցից օգտվել է հաճախորդը: Աղյուսակի առաջին հատվածում նշված է կայքի անվանումը, երկրորդում՝ կայք մուտք գործելու ամսաթիվը, երրորդում՝ կայք մուտք գործելու ճշգրիտ ժամկետը: Հաճախորդ դառնալիս քաղաքացուն տրվում է անձնական նույնականացման համար, որը Լորիսի մոտ եղել է «10.9.0.39»:

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի թիվ 151-02 առ 22.01.2010թ. ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրված գրությամբ, որում շարադրված են բանկ ուղարկված ետգանձումային պահանջները և բանկի կողմից վերականգնված գումարը:

ՀՀ Կենտրոնական բանկից 10.02.2010թ. ստացված գրությամբ, որում շարադրված են գեղծարար գործարքների ամսաթվերը և հափշտակված գումարների չափը

«Տանդեն փեյմնթս» ՍՊԸ 20.01.2010թ. ՀՀ ԱԱԾ տնօրենին գրությամբ, որում շարադրված են ընկերության կրած վնասների բնույթը, կատարման եղանակը և չափը:

«Տանդեն փեյմնթս» ՍՊԸ 01.02.2010թ. ՀՀ ԱԱԾ տնօրենին գրությամբ, որում շարադրված են կասկածելի գործարքների կատարման ամսաթիվը, ժամը, օպերատորի և բաժանորդի տվյալները, ինտերնետային կայքերի հասցեները, որոնցից ստացվել են հարցումները:

«Մայլան» ՍՊԸ կողմից տրամադրված լազերային սկավառակով և դրա գննության արձանագրությամբ:

ՀՀ Կենտրոնական բանկից 09.04.2010թ. ստացված գրությամբ, որում շարադրված են քննությանը հետաքրքրող անձանց կողմից 2009թ. ընթացքում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերում կատարված գործարքների վերլուծությունը:

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի թիվ 1560-02 առ 16.04.2010թ. ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետին հասցեագրված գրությամբ, որում շարադրված են բանկի կրած վնասի չափը և քրեական գործով որպես տուժող կողմ հանդես գալու հանգամանքը:

Այսպիսով, Լորիս Մուկուչի Ղազարյանը կատարել է հանցագործություններ՝ նախատեսված ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով:

Ամբաստանյալի պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ չկան:

Պատիժ սահմանելիս դատարանը, որպես Լորիս Մուկուչի Ղազարյանի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ զղջում է կատարածի համար, ֆիզիկապես վատառողջ է՝ տառապում է «Ստամոքսի խոց» և «Լոգոնկրոզ» հիվանդություններով, պատճառված վնասից 450.000 դրամը ամբաստանյալի հայրը գործի դատաքննության ընթացքում մուծել է և պարտավորվել է մուծել նաև գումարի մնացած մասը, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և դրանց համակցությունը դատարանը դիտում է բացառիկ հանգամանք և գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է պատիժ սահմանվի ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածի կիրառմամբ:

Տուժողի ներկայացուցչի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը՝ 344.000 դրամի չափով, ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա ու ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 357-375 հ.հ. դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

Լորիս Մուկուչի Ղազարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով: ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ քր. օր-ի 64 հոդվածի կիրառմամբ, դատապարտել ազատազրկման 8/ութ/ ամիս ժամկետով: ՀՀ քր. օր-ի 190 հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ քր. օր-ի 64 հոդվածի կիրառմամբ, դատապարտել ազատազրկման 6/վեց/ ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քր. օր-ի 66 հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, ՀՀ քր. օր-ի 190 հոդվածի 1-ին մասով սահմանված պատժից 4/չորս/ ամիս մասնակիորեն գումարել ՀՀ քր. օր-ի 181 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշանակված պատժին և վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 1/մեկ/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, որը կրելու է ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում՝ պատժի սկիզբը հաշվելով 2010թ. փետրվարի 16-ից: Խսափանման միջոցը թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Լորիսի Մուկուչի Ղազարյանից հօգուտ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 344.000 դրամ, որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում: Իրեղեն ապացույց ճանաչված լազերային սկավառակը թողնել քրեական գործին կից: Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր Մուշեղ Հարությունյան

<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	07-07-2010
<b>Ամսաթիվ:</b>	24-08-2010
<b>Գործը հանձնվել է գրասենյակ:</b>	27-08-2010
<b>Էջերի քանակ:</b>	346
<b>Գործին կից նյութերը:</b>	Լազերային սկավառակ
<b>Այլ նշումներ:</b>	Տրվել է կատարողական թերթ:
<b>Ամսաթիվ:</b>	27-08-2010
<b>Էջերի քանակ:</b>	349
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	